# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.01.2020թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2020/03**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.12.2019թ. թիվ 26/26-1/21787-2019 գրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 30.12.2019թ. թիվ ՊՆ/02/3028-2019 գրության հիման վրա, 30.12.2019թ. թիվ 26/26-1/21787-2019 նախաձեռնել է «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ընկերության կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/03 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.12.2019թ. թիվ ՊՆ/02/3028-2019 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի հետ 17.06.2019թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-20/5-4» գնման պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերության պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. դեկտեմբերի 23-ին միակողմանի լուծել է N ԳՀԱՊՁԲ-20/5-4 պայմանագիրը:

Պատվիրատուն միաժամանակ տեղեկացրել է, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.12.2019թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/03 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. ՍՑ-ՆԳ-2020/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ՍՑ-ՆԳ-2020/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի միջև 17.06.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20/5-4» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի

համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով (հետայսու՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (հետայսու՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 24.12.2019թ. թիվ ԴՎԱ/5659 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունը, Պատվիրատուն 23.12.2019թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.12.2019թ. թիվ 26/26-1/21787-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 30.12.2019թ. թիվ ՊՆ/02/3028-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի միջև 17.06.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20/5-4» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված 1500 հատ «Բահ հողահան» ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելված՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվել է 2019թ. 3-րդ եռամսյակ:

Կողմերի միջև 30.09.2019թ. կնքվել է Պայմանագրի N 1 փոփոխությունը, որի համաձայն Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցում կատարվել է

փոփոխություն, մասնավորապես՝ ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվել է 2019թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 29.10.2019թ.:

Համաձայն Պատվիրատուի կողմից 16.12.2019թ. կազմված բացասական եզրակացության՝ Ընկերության կողմից 16.12.2019թ. դրությամբ չի մատակարարվել 1500 հատ բահ և ուշացումը կազմել է 48 օր:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 24.12.2019թ. թիվ ԴՎԱ/5659 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունը, 23.12.2019թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 2.1.7.1. ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

**<u>բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:</u>**

Այսպիսով՝ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 17.06.2019թ. կնքված պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով և ժամկետներում՝ մինչև 29.10.2019թ., ՀՀ պաշտպանության նախարարությանը 1500 հատ բահ մատակարարելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ Ընկերությունն ընդհանրապես չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը, և ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 30 օրից ավելի, որի հետևանքով Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.12.2019թ. թիվ 26/26-1/21787-2019 գրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**